

Քրիստոսի Տնօրինական գործերու կատարումը կը զիտուի որ Զիթենեաց լերան վրայ կառուցուած Աշակերտարանի եկեղեցիին մէջ տեղի կ'ունենայ: Աւագ հինգշաբթիի գիշերային թափօրին առթիւ հո՛ն կը կատարուին ու կ'երգուին Յիսուսի մատնութեան և այլ Տնօրինականաց Աւետարանները ու երգերը: Զիթենեաց պարտէզի աւետարանական աւանդութիւնը ժամանակ մը թէև լերան զառիվայրին վրայ փոխադրուած է, բայց քիչ վերջ իր սկզբնական ուղղութեան հետեւելով Աւագ հինգշաբթիի գիշերուան նախնական տօնակարգը սկսած է կատարուել Ընդունման եկեղեցիի աւերակներու տեղւոյն վրայ:

Սաչակրաց գալէն մինչև 1112-1120, այս եկեղեցին տակառին վերաշինուած չէր, ինչպէս կը հասկցուի de Belardo d'Ascolի նոյն ժամանակի Ուղեգրութենէն. ան տեսած էր միայն աւանդական տեղը: Հաւանաբար նոյն թուականէն վերջը վերաշինուած է Ըմբռնման եկեղեցին Ս. Փրկիչ անուամբ: Անանուն լատին հեղինակ մը հետեւեալ կերպով կը նկարագրէ այս պարագան. «Այս եկեղեցիէն զատ, (Ս. Կուսի եկեղեցին) կը գտնուի այն տեղը՝ որ կը կոչուի Գեթսեմանի, և ուր կար քարայր մը, հոն Յուդան կատարեց մատնութիւնը, աջ կողմը, քարնկէց մը հեռաւորութեամբ շիկուած *kr այն եկեղեցին՝ ուր Յիսուս աղօթեց իր չարչարանքի ժամանակ, և իր քրտինքը արեան կայլակներու նման գետին կը վազէր» (Տե՛ս Les Eglises de terre sainte, de Voguë, էջ 414). նոյնը կը վկային Jean de Wurzburg 1165ին, 1172ին Theodoric, 1177ին յոյն վանական մը Յովհաննէս Փոկաս: ԺԳ. Ղարու յիշատակարան մը «Les Assises de Jérusalem», (Բ. հար. էջ 531) խորագրով՝ հետեւեալը կը գրէ նոյն վանքի մասին. «Զիթենեաց լերան ստորտը, վանք մը կար որ ժայռի մը վրայ հաստատուած էր և կը կոչուէր Գեթսեմանի. հոն Յիսուս Քրիստոս աղօթեց, մէկ կողմը ճանապարհ մը կայ ուրկէ կ'եննեն Զիթենեաց լեռը, հոն կար նաև քար մը, որուն մօտն էր վանքը՝ որ կը կոչուէր Ս. Փրկիչ. հոն էր որ Յիսուս Քրիստոս գիշեր ժամանակ առաջնապեցաւ ու աղօթեց, և հոն էր որ Յիսուսի մարմինը արջիւն քրտնեցաւ»: Ըմբռնման եկեղեցին մեծ կարեւորութիւն կ'ըստանայ Սաչակրաց ժամանակ և կ'ըլլայ հոգևոր կեդրոն Յովսափաթի հիւանդանոցին, որուն անդամները իշխանաւորներ էին և ամէն շաբաթ նոյն եկեղեցիին մէջ պատարագ կ'ըլլար հիւան-*